ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
էլ.հասցե՝ shnogh.lori@mta.gov.am
Հեռ.077 608-120

N 119
16 մարտ 2018թ.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Ձեզ ենք ուղարկում Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի ավագանու 6 մարտի 2018թվականի թիվ 23-31 որոշումները:

Առդիր՝ կցվում է 21 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

Կատ.՝ Հ. Ճիճիյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
էլ.հասցե shnogh.lori@mta.gov.am
Հեռ. 077 608-120

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՐՏԻ 2018թվականի N 23-Ա

ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 6–Ի ԹԻՎ 4 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ ենթակետով՝

Շնող համայնքի ավագանին որոշում է.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի ավագանու 6 մարտի 2018 թվականի թիվ 4 նիստի օրակարգը հաստատելու մասին»

2. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի 2018 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին»

3.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի ավագանու 20 դեկտեմբերի 2017 թվականի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքում 2018 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 21-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

4. «Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմի մասին»

5.«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էության,ծավալի,պայմանների և իրականացման կարգը հաստատելու մասին»

6.«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2018 թվականի բյուջետային ֆինանսավորման «Շնող համայնքում այգեգործության և հացահատիկային կուլտուրաների մշակման հեռանկարային զարգացում» և «Շնող համայնքում գյուղատնտեսության զարգացման, ենթակառուցվածքների բարելավման, ինչպես նաև բնապահպանական անվտանգության ապահովում» ծրագրերին մասնակցելու համաձայնություն տալու մասին»

7.«Գնված գույքը մուտքագրելու մասին»

8.«Շնողի համայնքապետարանում անասնաբույժի հաստիք նախատեսելու մասին»

9.«Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն տրամադրելու մասին»

N	Անուն ազգանուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1.	ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ			
2.	ԲԱՅՐԱՄՅԱՆ ԱՐՏԱԿ			
3.	ՂԱԶԱՐՅԱՆ ԶԱՎԵՆ			
4.	ՂՈՐԽՄԱԶՅԱՆ ԱՐՄԵՆ			
5.	ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ			
6.	ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԱՍՏՂԻԿ			
7.	ՈՒԼԻԽԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ			
8.	ՍԱՐԳՍՅԱՆ ՎԻԳԵՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
էլ.հասցե՝ shnogh.lori@mta.gov.am
Հեռ. 077 608-120

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՐՏԻ 2018թվականի N 24-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին »Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5 կետով , «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33 հոդվածով

Շնող համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի 2018թվականի տարեկան բյուջեում կատարված փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

N	Անուն ազգանուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1.	ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ			
2.	ԲԱՅՐԱՄՅԱՆ ԱՐՏԱԿ			
3.	ՂԱԶԱՐՅԱՆ ԶԱՎԵՆ			
4..	ՂՈՐԽՄԱԶՅԱՆ ԱՐՄԵՆ			
5.	ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ			
6.	ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԱՍՏՂԻԿ			
7.	ՌԻԼԻԽԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ			
8.	ՍԱՐԳՍՅԱՆ ՎԻԳԵՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի ՇՆող համայնքի ավագանու
06 մարտի 2018թ-ի թիվ 24-Ն որոշման

Շնող համայնքի վարչական բյուջեի եկամտային մասում ավելացնել

- տեղական վճարները 780,0 հազ. դրամ - սահմանել 10120,4 հազ. դրամ
- այլ եկամուտները 41700,0 հազ. դրամ - սահմանել 55400,0 հազ. դրամ

Բյուջեի ծախսային մասում փոփոխել.

01-01-01 նախահաշվում /կառավարման ապարատ/

- հոդված 4232 /համակարգային ծառայություններ/ ավելացնել 400,0 հազ. դրամ և սահմանել 400,0 հազ. դրամ
- հոդված 5122 /վարչական սարքավորումներ ավելացնել 600,0 հազ. դրամ և սահմանել 600,0 հազ. դրամ

09-01-01 նախահաշվում /նախադպրոցական հիմնարկ/

- հոդված 4637/դրամաշնորհ/ ավելացնել 400,0 հազ. դրամ և սահմանել 40957,0 հազ. դրամ

04-05-01 նախահաշվում /ճանապարհային տնտեսություն/

- հոդված 5113/կապիտալ վերանորոգում/ ավելացնել 23573,0 հազ. դրամ և սահմանել 32000,606 հազ. դրամ
- հոդված 5134/նախագծային ծախսեր/ ավելացնել 500,0 հազ. դրամ և սահմանել 500,0 հազ. դրամ

01-06-01 նախահաշվում /ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ/

- հոդված 4251/ընթացիկ նորոգում/ ավելացնել 1100,0 հազ. դրամ և սահմանել 1100,0 հազ. դրամ

04-02-01 նախահաշվում /գյուղատնտեսություն/

- հոդված 4241/մասնագիտական ծառայություններ/ ավելացնել 780,0 հազ. դրամ և սահմանել 780,0 հազ. դրամ
- հոդված 5121/տրանսպորտային միջոցներ / ավելացնել 12000,0 հազ. դրամ և սահմանել 12000,0 հազ. դրամ

11-01-02 նախահաշվում /պահուստային ֆոնդ/

- հոդված 4891/պահուստային միջոցներ/ ավելացնել 3127,0 հազ. դրամ և սահմանել 7831,1 հազ. դրամ

Համայնքի ղեկավար՝ Դավիթ Ղումաշյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
էլ.հասցե shnogh.lori@mta.gov.am
Հեռ. 077 608-120

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՐՏԻ 2018թվականի N 25-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 21-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներով , «Իրավական ակտերի մասին »Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի գ) ենթակետով

ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքում 2018 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի ավագանու 20 դեկտեմբերի 2017 թվականի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքում 2018 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 21-Ն որոշումը

3.Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

N	Անուն ազգանուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1.	ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ			
2.	ԲԱՅՐԱՄՅԱՆ ԱՐՏԱԿ			
3.	ՂԱԶԱՐՅԱՆ ԶԱՎԵՆ			
4.	ՂՈՐԽՄԱԶՅԱՆ ԱՐՄԵՆ			
5.	ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ			
6.	ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԱՍՏՂԻԿ			
7.	ՈՒԼԻԽԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ			
8.	ՍԱՐԳՍՅԱՆ ՎԻԳԵՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

Հավելված
Շնող համայնքի ավագանու
2018թվականի մարտի 6-ի թիվ 25-Ն որոշման

ՀԱՅԱՍՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ,ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Շնող համայնքում սահմանել տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ **7500 (յոթ հազար հինգ հարյուր)դրամ**

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **15000(տասնհինգ հազար) դրամ**
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **25000 (քսանհինգ հազար)դրամ**
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **25000 (քսանհինգ հազար) դրամ**
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **50000 (հիսուն հազար) դրամ**

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝**1500 (հազար հինգ հարյուր) դրամ**
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **2500 (երկու հազար հինգ հարյուր) դրամ**

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝**1500 (հազար հինգ հարյուր) դրամ**

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ **2500 (երկու հազար հինգ հարյուր) դրամ**

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **150000 (հարյուր հիսուն հազար) դրամ**

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **30000 (երեսուն հազար) դրամ.**

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝**25000 (քսանհինգ հազար) դրամ.**

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **3000 (երեք հազար) դրամ**
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝**4000 (չորս հազար) դրամ**
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝**4000 (չորս հազար հինգ հարյուր) դրամ**
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **6500(վեց հազար հինգ հարյուր) դրամ**
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **8000 (ութ հազար) դրամ**
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **15000 (տասնհինգ հազար) դրամ**

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **3000 (երեք հազար) դրամ,**
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **4000 (չորս հազար) դրամ**
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **4500(չորս հազար հինգ հարյուր) դրամ**
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **6500 (վեց հազար հինգ հարյուր) դրամ**
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **8000 (ութ հազար) դրամ**
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **15000 (տասնհինգ հազար) դրամ**

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ **270(երկու հարյուր յոթանասուն) դրամ** ՝ մեկ քառակուսի մետրի համար

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի ըև վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ **5000 (հինգ հազար)դրամ,**

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **13000 (տասներեք հազար) դրամ,**

գ. բաղնիքների (սաունաների) համար՝**100000 (հարյուր հազար) դրամ,**

դ. Խաղատների համար **250000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ,**
ե.շահումով խաղերի համար **125000(հարյուր քսանհինգ հազար) դրամ,**
զ. վիճակախաղերի համար՝ **50000 (հիսուն հազար) դրամ.**
10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել.
ա. հիմնական շինությունների ներսում՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **2000 (երկու հազար) դրամ**
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **3000(երեք հազար) դրամ**
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝**7500 (յոթ հազար հինգ հարյուր) դրամ**
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **8000 (ութ հազար) դրամ,**
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **11000 (տասնմեկ հազար) դրամ,**
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝**16000 (տասնվեց հազար) դրամ.**
բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **500 (հինգ հարյուր) դրամ**
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝**1000 (հազար) դրամ**
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **1500 (հազար հինգ հարյուր) դրամ**
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **3000 (երեք հազար) դրամ**
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝**5000 (հինգ հազար)դրամ**
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **8000 (ութ հազար) դրամ**
11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար,բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝
ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **1000 (հազար) դրամ**
բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **1750 (հազար յոթ հարյուր հիսուն) դրամ**
գ. սոցիալական գովազդի համար՝ 0 **(զրո) դրամ,**
դ. այլ արտաքին գովազդի համար՝ **750 (յոթ հարյուր հիսուն) դրամ**
ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով
զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով
12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար օրացուցային տարվա համար՝ **50000 (հիսուն հազար)դրամ**

13) Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝**5000 (հինգ հազար)դրամ**

14) Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **500000 (հինգ հարյուր հազար)դրամ**

15) Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝**2500000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար)դրամ**

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **5.000,000 (հինգ միլիոն) դրամ**

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **7.000,000(յոթ միլիոն)դրամ**

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝**10000000 (տասը միլիոն) դրամ:**

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1. համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **2000 (երկու հազար) դրամ.**

2.ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝**3000 (երեք հազար) դրամ.**

3.ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **2000 (երկու հազար) դրամ.**

4. համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **2000(երկու հազար)դրամ.**

5. համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել **3000 (երեք հազար) դրամ**

6.համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին վերնիսաժներին մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **2000 (երկու հազար) դրամ**

7. համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանել.

1. կենցաղային աղբի համար՝
   1) համայնքում ըստ հասցեի փաստացի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական 50 **(հիսուն) դրամ**

2.ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար
   1) ըստ ծավալի ՝ մեկ խորանարդ մետր աղբի համար **500 (հինգ հարյուր) դրամ**
   2) ըստ զանգվածի ՝մեկ տոննա աղբի համար **1000 (հազար)դրամ**

3.համայնքում գործող իրավաբանական անձանցից աղբահանության համար գանձվող գումար սահմանել՝

1) Առևտրի /այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայությունների **1քմ-ի համար 20 (քսան) դրամ**
2) Հյուրանոցներ և հյուրանոցային ծառայությունների **1քմ-ի համար 10 (տաս) դրամ**
3) Արտադրական,արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների **1քմ-ի համար 4 (չորս) դրամ**
4) Կրթական,մշակութային,առողջապահական,սպորտային,գիտահետազոտական շինությունների **1քմ-ի համար 2(երկու) դրամ**

8. համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար սահմանել յուրաքանչյուր երեխայի համար ամսական **3000 (երեք հազար) դրամ**

9. համայնքային ենթակայության խմելու ջրից օգտվողների համար՝ տնտեսությունը **500 (հինգ հարյուր) դրամ**

10.համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների ծառայություններից օգտվողների համար՝ մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար սահմանել.

1) Դաշնամուր - **2500 (հազար հինգ հարյուր) դրամ**
6) վոկալ - **2000(հազար) դրամ**
7) ջութակ - 2000 (հազար) դրամ
8) դուդուկ - 2000(հազար)դրամ
10) քանոն - 2000 (հազար) դրամ
13) գեղ. բաժին - 2000(հազար) դրամ
14) պար - **0(զրո) դրամ**
15) շախմատ - **0(զրո) դրամ**

11. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ **200 (երկու հարյուր) դրամ** փոխհատուցման վճար:

Համայնքի ղեկավար Դ.Ղումաշյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
էլ.հասցե shnogh.lori@mta.gov.am
Հեռ. 077 608-120

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՐՏԻ 2018թվականի N 26-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ և ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ և ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով

Շնող համայնքի ավագանին որոշում է՝

1.Շնող համայնքի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամների թիվը սահմանել 4 և ընդգրկել հետևյալ ավագանու անդամներին.

1.1Արտակ Արարատի Բայրամյան
1.2 Զավեն Ավետիքի Ղազարյան
1.3 Արմեն Ասատուրի Ղորխմազյան

2.Ուժը կորցրած ճանաչել Շնող համայնքի ավագանու 22 նոյեմբերի 2016թվականի «Հայաստանի հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմի մասին» թիվ 40 -Ա որոշումը:

N	Անուն ազգանուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1.	ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ			
2.	ԲԱՅՐԱՄՅԱՆ ԱՐՏԱԿ			
3.	ՂԱԶԱՐՅԱՆ ԶԱՎԵՆ			
4.	ՂՈՐԽՄԱԶՅԱՆ ԱՐՄԵՆ			
5.	ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ			
6.	ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԱՍՏՂԻԿ			
7.	ՈՒԼԻԽԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ			
8.	ՍԱՐԳՍՅԱՆ ՎԻԳԵՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
էլ.հասցե shnogh.lori@mta.gov.am
Հեռ. 077 608-120

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՐՏԻ 2018թվականի N 27-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՈՒԹՅԱՆ, ԾԱՎԱԼԻ, ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 36-րդ եթակետով

Շնող համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել << Լոռու մարզի Շնող համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էության,ծավալի,պայմանների և իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

N	Անուն ազգանուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1.	ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ			
2.	ԲԱՅՐԱՄՅԱՆ ԱՐՏԱԿ			
3.	ՂԱԶԱՐՅԱՆ ԶԱՎԵՆ			
4.	ՂՈՐԽՄԱԶՅԱՆ ԱՐՄԵՆ			
5.	ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ			
6.	ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԱՍՏՂԻԿ			
7.	ՈՒԼԻԽԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ			
8.	ՍԱՐԳՍՅԱՆ ՎԻԳԵՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի ավագանու
2018թ.մարտի 6 -ի թիվ 27 -Ն որոշման

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՈՒԹՅԱՆ, ԾԱՎԱԼԻ, ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով (այսուհետ՝ կարգ) սահմանվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի (այսուհետ՝ համայնք) վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի բարեկարգման էությունը, ծավալը և պայմանները (այսուհետ՝ պարտադիր բարեկարգում):

2. Պարտադիր բարեկարգումը՝ միջոցառումների համալիր է, որն ուղղված է համայնքի սանիտարական վիճակի և գեղագիտական տեսքի պահպանմանն ու բարելավմանը, բնակչության բնակվելու պայմանների հարմարավետության բարձրացմանը, ինչպես նաև համայնքի ճարտարապետական տեսքի պահպանմանը, որոնք իրականացվում են անշարժ գույքի պարտադիր ընթացիկ նորոգման, ընդհանուր օգտագործման տարածքների պարբերաբար մաքրման և բարեկարգման միջոցով:

3. Պարտադիր բարեկարգման օբյեկտներն են՝ շենքերը, շինությունները և այլ կառույցները, ինչպես նաև անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման հողամասերն ու տարածքները:

4. Սույն կարգը տարածվում է համայնքի վարչական տարածքում գտնվող՝

1) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների, անհատական բնակելի տների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

2) առանձին տեղակայված հասարակական, արտադրական և այլ ոչ բնակելի նշանակության շենքերի, շինությունների և կառույցների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

3) այգիներում, հանգստի գոտիներում, պուրակներում և ընդհանուր օգտագործման այլ տարածքներում գտնվող սրճարանների, բարերի, ռեստորանների և զվարճանքի այլ օբյեկտների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

4) ավտոկանգառների, ավտոկայանատեղերի, բենզալցակայանների և գազալցակայանների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

5) բացօթյա շուկաների և տոնավաճառների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

5. Պարտադիր բարեկարգման աշխատանքներն են՝

1) անշարժ գույքի արտաքին մասի պատշաճ պահպանման (նաև լվացման) և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարբերաբար բարեկարգումը և մաքրումը, մաքրության պահպանումը,

2) կանաչապատման համար նախատեսված տարածքների, սիզամարգերի, բուսածածկերի կանաչապատումը և դրանց անհրաժեշտ խնամքն ու պահպանումը,

3) շենքերի և շինությունների հարակից բակային տարածքների պարբերաբար բարեկարգումը և մաքրումը,

4) թեթև կոնստրուկցիաներով (մետաղյա խողովակ, ցանց, ճաղեր և այլն) ցանկապատում և դրանց փոխում,փոխարինում,

5) անշարժ գույքի մուտքի լուսավորության ապահովումը,
6) համայնքային նշանակության փողոցներում գտնվող առևտրային նշանակության օբյեկտների տոնական զարդարումը՝ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոներին՝ յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 25-ից մինչև հաջորդ տարվա հունվարի 13-ը ներառյալ:
6. Շինարարության թույլտվություն չպահանջող բարեկարգման աշխատանքներն ապահովում են տարածքների կանաչապատումը, ծառատնկումը, ինչպես նաև բարեկարգման տարրերի վերականգնումը, նորոգումը, փոխումը և փոխարինումը:
7. Պարտադիր բարեկարգման աշխատանքների համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշմանը համապատասխան՝ շինարարության թույլտվություն չի պահանջվում:
8. Քաղաքաշինական օրենսդրությամբ նախատեսված կարգով և միայն համաձայնեցված նախագծի և շինարարության թույլտվության առկայությամբ կարող են իրականացվել հետևյալ աշխատանքները.
1) շենքի ճակատի նոր ճարտարապետական տարրեր, դրանց փոխարինում կամ վերացում,
2) տանիքի ձևի, ծածկույթի նյութի և գույնի փոփոխում,
3) լոջիաների ապակեպատում կամ ներքին մակերևույթների գույնի փոփոխություններ,
4) պատշգամբների բազրիքաճաղերի նկարվածքի և գույնի փոփոխություններ,
5) բնական քարե շարվածքով իրականացված շենքերի ճակատների նյութի, ֆակտուրայի փոփոխություն և ներկում, ինչպես նաև նոր բացվածքների բացում կամ գոյություն ունեցողների փակում:
9. Գործող ընթացակարգերով սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներն իրականացվում են համայնքի ղեկավարի կամ նրա լիազորած անձի կողմից համաձայնեցված ձևավորման նախագծին և (կամ) հատակագիծ - սխեմային համապատասխան: Նախագիծը անվճար մշակվում և տրվում է Շնողի համայնքապետարանի (այսուհետ՝ համայնքապետարանի) համապատասխան ստորաբաժանման (մասնագետի) կողմից:
10. Պատմության և մշակույթի հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված շենքերի և կառույցների ճակատների վերակառուցումը և վերանորոգումը իրականացվում է հուշարձանների պահպանության պետական լիազոր մարմնի համաձայնությամբ: Պետական լիազոր մարմնի կարող են տրվել նորոգման կամ վերակառուցման լուծումների վերաբերյալ հանձնարարականներ, որոնք ներառվում են համայնքապետարանի կողմից տրվող ձևավորման նախագծում կամ ճարտարապետահատակագծային առաջադրանքում:
11.Համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանման (մասնագետի, **վարչական ղեկավարի բազմաբնակավայր համայնքում**) կողմից կարգի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ընթացքում շենքի կամ շինության սեփականատիրոջը կամ տիրապետողին կարող են տրվել ցուցումներ շենքի, շինության ճակատների, օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքների բարեկարգման և կատարվող այլ աշխատանքների իրականացման վերաբերյալ, հիմնավորելով դրանց անհրաժեշտությունը և նշելով ժամկետները:
12. Պարտադիր բարեկարգման պահանջներն են՝
1) խանութների, հասարակական սննդի, կենցաղսպասարկման և այլ նմանատիպ օբյեկտների ցուցափեղկերը և գովազդային վահանակները պետք է սարքավորված և ձևավորված լինեն պատշաճ ձևով, չխաթարեն միջավայրը և չխանգարեն հետիոտն և ավտոմոբիլային երթևեկությանը,

2) մայթերի բարեկարգման դեպքում պետք է կատարվեն հետևյալ պահանջները.
ա. ապահովված լինի տեսանելի մաքրությունը (փոշուց, աղբից, տերևներից և այլն) և անհրաժեշտ քանակով աղբամանների առկայությունը, մաքրման աշխատանքները պետք է կատարվեն առավոտյան ժամը 08:00-ից մինչև 09:00-ն և երեկոյան ժամը 18:00-ից մինչև 19:00-ն,
բ. ձմռանը պետք է իրականացվի տեղացած ձյան ամենօրյա մաքրումը՝ տեղումները դադարելուց 4 ժամ հետո կամ մինչև առավոտյան ժամը 11:00-ն, եթե ձյունը դադարել է նախորդ երեկո ժամը 21:00-ին և դրանից հետո,
գ. ձյան տեղումների ընդհատման ընթացքում մայթերի ասֆալտ-բետոնե ծածկերը և (կամ) սալիկապատված հատվածները պետք է ամբողջությամբ մաքրվեն ձյան և սառույցի կուտակումներից,
դ. ձյան մաքրման ընթացքում արգելվում է ձյան և սառույցի կույտերը կուտակել երթևեկելի մասում: Թույլատրվում է միայն ժամանակավորապես կույտերը տեղավորել հասարակական տրանսպորտի կանգառների հետնամասում, սիզամարգերում կամ ճամփեզրին,
ե. ճանապարհների, փողոցների եզրաքարերը պետք է ամբողջությամբ մաքրված լինեն ձյունից և սառույցից:
13. Համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգումը իրականացնում է անշարժ գույքի սեփականատեր և (կամ) տիրապետող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:
14. Կանաչապատման աշխատանքները ենթակա են պարտադիր կատարման միայն համայնքապետարանի կողմից տրված ֆիտոնախագծի համաձայն:
15. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը անշարժ գույքի արտաքին ճարտարապետական ցանկացած փոփոխություն,այդ թվում արտաքին գովազդի տեղադրումը համաձայնեցնում է համայնքի ղեկավարի հետ:
16. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը, սույն կարգի համապատասխան՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքների պարտադիր բարեկարգման աշխատանքներն իրականացնում է ինքնուրույն կամ իր հաշվին՝ մասնագիտացված կազմակերպությունների ներգրավման միջոցով:
17. Այն դեպքում, երբ անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող են հանդիսանում մի քանի անձ, ապա նրանցից յուրաքանչյուրի մասնակցությունը պարտադիր բարեկարգման աշխատանքներին որոշվում է սեփականության կամ տիրապետման իրավունքում նրանց մասնակցության բաժնին համամասնորեն:
18. Այն դեպքում, երբ հատկացված հողամասի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքները, ինչպես նաև շենքի, շինության կամ դրանց տարածքի սեփականության կամ օգտագործման կամ այլ գույքային իրավունքները չեն ենթարկվել պետական գրանցման, ապա պարտադիր բարեկարգման և մաքրման է ենթակա այն տարածքը, որը փաստացի տիրապետվում է անշարժ գույքի տիրապետողի կողմից:
19. Անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման տարածքների պարտադիր բարեկարգման աշխատանքների ծավալը որոշվում է՝
1) կրպակների, տաղավարների կամ մանրածախ առևտուր իրականացնող այլ օբյեկտների, հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների, կենցաղային և այլ սպասարկման օբյեկտների, ավտոտնակների համար՝ հատկացված կամ զբաղեցրած տարածքի պարագծից մինչև 5 մետր, կառույցից դուրս՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,
2) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների համար՝ դրանց զբաղեցրած տարածքի պարագծից մինչև 5 մետր, կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

3) առանձնատների համար՝ դրանց զբաղեցրած հողամասի պարագծով՝ մինչև 5 մետր, կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,
4)ավտոկանգառների, ավտոկայանատեղերի, բենզալցակայանների, գազալցակայանների, արդյունաբերական և շինարարական օբյեկտների համար՝ ամբողջ տարածքի պարագծից 5-15 մետր, կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,
5) առողջապահական և կրթական օբյեկտների համար՝ ամբողջ տարածքի պարագծից մինչև 10 մետր, կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,
6) շուկաների, տոնավաճառների, առևտրի կենտրոնների համար՝ ամբողջ տարածքի պարագծից մինչև 5-10 մետր, կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,
7) առանձին դեպքերում կարող են կիրառվել սույն կետի 1-6-րդ ենթակետերում նշված ծավալներից տարբերվող ծավալներ՝ համայնքապետարանի համաձայնությամբ:
20. Սույն կարգով նախատեսված դրույթների խախտումն առաջացնում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 156-րդ հոդվածով նախատեսված տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի **տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով:**
21. Մինչև վարչական տուգանքի նշանակումը համայնքի ղեկավարը անշարժ գույքի սեփականատիրոջը կամ տիրապետողին տալիս է ծանուցագիր – զգուշացում նրա տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի բարեկարգման մասին՝ նշելով իրականացվելիք բարեկարգման աշխատանքները և ժամկետը, որը չի կարող գերազանցել **30 օրը**:
22. Անշարժ գույքի սեփականատիրոջը կամ տիրապետողին բարեկարգման աշխատանքները կատարելու համար տրված ժամկետի ավարտից հետո, եթե այդ աշխատանքները չեն իրականացվել համայնքի ղեկավարի կողմից տուգանքի նշանակումը պարտադիր է:
23. Բարեկարգման աշխատանքները չկատարելու համար նշանակված և գանձված վարչական տուգանքներից առաջացած գումարները համայնքի ղեկավարը օգտագործում է միայն համայնքում բարեկարգման աշխատանքներ իրականացնելու համար:

Աշխ.քարտուղար՝ _____ Հ.Ճիճիլյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
էլ.հասցե shnogh.lori@mta.gov.am
Հեռ. 077 608-120

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՐՏԻ 2018թվականի N 28-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ «ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ և ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԵՎ «ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ , ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ,ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ» ԾՐԱԳՐԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով

Շնող համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2018 թվականի բյուջետային ֆինանսավորման «Շնող համայնքում այգեգործության և հացահատիկային կուլտուրաների մշակման հեռանկարային զարգացում» և «Շնող համայնքում գյուղատնտեսության զարգացման, ենթակառուցվածքների բարելավման, ինչպես նաև բնապահպանական անվտանգության ապահովում» ծրագրերին մասնակցելու և դիմել Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն (ՏԿԶՆ)՝ համայնքի համար հետևյալ առաջնահերթ խնդրով.

2.Հանձնարարել համայնքապետարանին պատրաստել և ներկայացնել համապատասխան հայտ՝ Ծրագրին մասնակցելու վերաբերյալ:

N	Անուն ազգանուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1.	ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ			
2.	ԲԱՅՐԱՄՅԱՆ ԱՐՏԱԿ			
3.	ՂԱԶԱՐՅԱՆ ԶԱՎԵՆ			
4.	ՂՈՐԽՄԱԶՅԱՆ ԱՐՄԵՆ			
5.	ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ			
6.	ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԱՍՏՂԻԿ			
7.	ՈՒԼԻԽԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ			
8.	ՍԱՐԳՍՅԱՆ ՎԻԳԵՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
էլ.հասցե՝ shnogh.lori@mta.gov.am
Հեռ. 077 608-120

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՐՏԻ 2018թվականի N 29-Ա

ԳՆՎԱԾ ԳՈՒՅՔԸ ՄՈՒՏՔԱԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ կետով՝

Շնող համայնքի ավագանին որոշում է.

ՀՀ Լոռու մարզի Շնողի համայնքապետարանի հիմնական միջոց հանդիսացող գույքի ցանկում մուտքագրել՝

Տպիչ՝ CANON 3110 -1 հատ -128 000 ՀՀ դրամ

N	Անուն ազգանուն	Կողմ	Դեմ	Չեռնպահ
1.	ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ			
2.	ԲԱՅՐԱՄՅԱՆ ԱՐՏԱԿ			
3.	ՂԱԶԱՐՅԱՆ ԶԱՎԵՆ			
4.	ՂՈՐԽՄԱԶՅԱՆ ԱՐՄԵՆ			
5.	ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ			
6.	ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԱՍՏՂԻԿ			
7.	ՌԻԼԻԽԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ			
8.	ՍԱՐԳՍՅԱՆ ՎԻԳԵՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
էլ.հասցե՝ shnogh.lori@mta.gov.am
Հեռ. 077 608-120

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՐՏԻ 2018թվականի N 30-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասին, համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 21- ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 18 -Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվության բարեավման,պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացություն(ներ)ը՝

Շնող համայնքի ավագանին որոշում է՝

1.Բավարարել Շնող համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի
2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում վճարել հատկացված գումարը:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

N	Անուն ազգանուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1.	ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ			
2.	ԲԱՅՐԱՄՅԱՆ ԱՐՏԱԿ			
3.	ՂԱԶԱՐՅԱՆ ԶԱՎԵՆ			
4.	ՂՈՐԽՄԱԶՅԱՆ ԱՐՄԵՆ			
5.	ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ			
6.	ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԱՍՏՂԻԿ			
7.	ՈՒԼԻԽԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ			
8.	ՍԱՐԳՍՅԱՆ ՎԻԳԵՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի ավագանու
2018թվականի մարտի 06 -ի թիվ 30 -Ա որոշման

1) **Ֆինանսական օգնություն**

Շախկյան Հակոբ Նոդարիկի - 30 000 դրամ

2) **Ուսման վարձ**

2.1 Անանյան Տաթևիկ -Երևանի պետական համալսարան- 50000դրամ

2.2 Մաշինյան Երվանդ –ՀՊՃՀ –50 000դրամ

3) **Երեխայի ծննդյան գումար**

3.1 Վարոսյան Նարինե Նորայրի - 10000 դրամ

3.2 Սարիբեկյան Տաթևիկ Սերժիկի - 10000 դրամ

3.3 Արամյան Ռոմիկ Վարուժանի - 10000 դրամ

3.4 Չիլինգարյան Հայկ Վահանի - 10000 դրամ

3.5.Բոշյան Արտակ Սամվելի - 10000դրամ

4) **Հարազատի հողարկավորության ծախսերի մասնակի հատուցման գումար**

4.1 Արամյան Ռոմիկ Վարուժանի -10000 դրամ

4.2 Մարգարյան Մկրտիչ Ալբերտի - 10000 դրամ

4.3 Հոբոսյան Նորիկ Սերյոժայի - 10000 դրամ

4.4 Հովսեփյան Հովիկ Շալիկոյի - 10000 դրամ

4.5 Փարեմուզյան Սվետլանա Աղասու – 10000դրամ

4.6 Մարգարյան Սվետլանա - 10000 դրամ

4.7 Նորեկյան Նորայր Հովիկի - 10000դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
էլ.հասցե՝ shnogh.lori@mta.gov.am
Հեռ. 077 608-120

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՐՏԻ 2018թվականի N 31-Ա

ՇՆՈՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԱՆԱՍՆԱԲՈՒՅԺԻ ՀԱՍՏԻՔ ՆԱԽԱՏԵՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Անասնաբուժության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով (ընդունված 30.12.2017թ.) և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ կետով (ընդունված 21.12.2017թ.), հիմք ընդունելով ՀՀ տարածքային և զարգացման նախարարի հանձնարարականը, ՀՀ գյուղատնտեսության նախարարի նամակը և ՀՀ Լոռու մարզպետի 18 փետրվարի 2018թ-ի թիվ 101/105.3.2/820-18 գրությունը

Շնող համայնքի ավագանին որոշում է՝

1.Շնող համայնքում նախատեսել անասնաբույժի հաստիք:

2.Աշխատավարձը համաձայն սահմանված դրույքաչափի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

N	Անուն ազգանուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1.	ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ			
2.	ԲԱՅՐԱՄՅԱՆ ԱՐՏԱԿ			
3.	ՂԱՋԱՐՅԱՆ ՋԱՎԵՆ			
4.	ՂՈՐԽՄԱԶՅԱՆ ԱՐՄԵՆ			
5.	ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ			
6.	ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԱՍՏՂԻԿ			
7.	ՈՒԼԻԽԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ			
8.	ՍԱՐԳՍՅԱՆ ՎԻԳԵՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ